

**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ  
2010Թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
(ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ)**

## ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ

- 1) Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը և դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվելու է թողարկողը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Ընկերության գործունեության հիմնական տեսակն էլեկտրաէներգիայի արտադրությունն է:

Հաշվետու եռամսյակում ընկերության արտադրանքը կազմել է 21.828 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա (202,900,000 դրամ), որից 21.110 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիան (190,000,000 դրամ) արտադրվել է Սարսանգ ՀԷԿ-ի միջոցով, իսկ 0.718 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիան (12,900,000 դրամ)՝ Թրդի-1 ՀԷԿ-ի միջոցով:

Ներկայում ընկերությունը շարունակում է երեք նոր փոքր ՀԷԿ-երի (Մատաղիս 1, Մատաղիս 2 և Թրդե 2) շինարարությունը:

Ընկերության վերցրած և մարված վարկերի ծավալները բերված են թիվ 1 աղյուսակում.

Աղյուսակ 1

### «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ վարկերի ծավալը 2010թ. 3-րդ. եռ.

Վերցված	Մարված
320,000 ԱՄՆ դոլար	230,000 ԱՄՆ դոլար
555,000,000 ՀՀ դրամ	44,000,000 ՀՀ դրամ

Ընկերության կարծիքով հաշվետու եռամսյակում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունը ընկերության տնօրենների խորհրդի 2010 թ. օգոստոսի 20-ի որոշումն էր, որով որոշվեց լրացուցիչ տեղաբաշխել 1.400.000.000 (մեկ միլիարդ չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 1.400.000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) հատ, 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմսեր՝ ապահովելով բաժնետոմսերի սեփականատերերի նախապատվության իրավունքի կիրառումը: Բաժնետոմսերի տեղաբաշխման գինն է 1.110 ՀՀ դրամ՝ 1 բաժնետոմսի դիմաց:

Ընկերությունը հիմնականում առնչվում է հետևյալ ռիսկերի և անորոշությունների հետ.

**Արժույթային ռիսկեր.** Այդ ռիսկերը ներառում են ՀՀ դրամի և այլ արժույթների փոխարժեքի զգալի փոփոխությունների հնարավորությունը, ինչպես նաև ՀՀ և ԼՂՀ դրամային կառույցների կողմից միջամտության կամ փոփոխությունների հնարավորությունը:

**Բնակլիմայական պայմանների ռիսկեր.** Բնակլիմայական պայմաններն ունեն էական ազդեցություն ընկերության գործունեության վրա: Ընկերության հասույթը էականորեն պայմանավորված է ջրի հոսքի ծավալներով: Չնայած նրան, որ նախկին մի քանի տարիների ջրի հոսքի ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս բավականին մեծ ճշտությամբ կատարել կանխատեսումներ, այնուամենայնիվ, բնակլիմայական գործոնով է պայմանավորված ընկերության հասույթի ծավալը և հետևաբար ֆինանսական ցուցանիշները:

Նշված ռիսկերն ու անորոշություններն էապես կազդեն նաև հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի վրա:

Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները և գործակիցները բերված են թիվ 2 և թիվ 3 աղյուսակներում:

Աղյուսակ 2

**ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2010թ. III եռ.**

Ցուցանիշ	Հազ. դրամ
Արտադրանքի իրացումից հասույթ	202,906
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-80,877
Իրացման ծախսեր	-8
Վարչական ծախսեր	-24,802
Գործառնական գործունեությունից շահույթ	96,915
2010թ. 3-րդ եռամսյակի շահույթ	181,807
Դեբիտորական պարտք	1,106,078
Կրեդիտորական պարտք	5,437,316

Աղյուսակ 3

**ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 2010թ. III եռ.**

Ցուցանիշի անվանումը	01.10.2010 թ.
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	151.2
Մեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	13.2 %
Ակտիվների շահութաբերություն (ROA)	8.5 %
Զուտ շահույթի մարժա (NPM)	78.7 %
Կապիտալի համարժեքության գործակից	56.2 %
Ֆինանսական կախվածության գործակից	78.1 %
Բացարձակ իրացվելության գործակից	0.1
Ընթացիկ իրացվելության գործակից	0.6
Ընդհանուր իրացվելության գործակից	0.6
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	2.1
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	172.3
Պաշարների շրջանառելիության գործակից	11.5
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	31.8
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	0.1
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	6477.4

**2) Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:**

Նախատեսվում է, որ 2010 թ. 4-րդ եռամսյակում ընկերությունը Սարսանգ ՀԷԿ-ի միջոցով կարտադրի 61 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա (549,000,000 դրամ), իսկ Թրդի-1 ՀԷԿ-ի միջոցով՝ 1 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա (18,000,000 դրամ):

Ընկերության կանխատեսումը 4-րդ եռամսյակում վերցնելիք և մարվող վարկերի ծավալների մասին բերված է թիվ 4 աղյուսակում:

**«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ վարկերի ծավալը 2010թ. 4-րդ. եռ. կանխատեսում**

Վերցվող	Մարվող
300,000 ԱՄՆ դոլար	300,000 ԱՄՆ դոլար
500,000,000 ՀՀ դրամ	900,000,000 ՀՀ դրամ

2010 թ. 4-րդ եռամսյակում նախատեսվում է նաև Թրդի-3 ՀԷԿ-ի նախագծի պատվիրումը և Չեխիայից ժամանած մասնագետների կողմից Թրդի-2 ՀԷԿ-ի սարքավորումների մոնտաժումը:

Ընկերությունը կանխատեսում է, որ թողարկված բաժնետոմսերը կտեղաբաշխվեն ամբողջությամբ:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Վահրամ Բեգլարյան	տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն	<p><b>Որպես գլխավոր տնօրեն՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից,</li> <li>✓ ներկայացնում է Ընկերությունը ԼՂՀ-ում և արտասահմանում,</li> <li>✓ գործում է առանց լիազորագրի,</li> <li>✓ տալիս է լիազորագրեր,</li> <li>✓ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,</li> <li>✓ բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ,</li> <li>✓ Ընկերության Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը,</li> <li>✓ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,</li> <li>✓ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին,</li> <li>✓ աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:</li> </ul> <p><b>Որպես խորհրդի անդամ՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ մասնակցել Խորհրդի նիստերին, մասնակցել Խորհրդի որոշումների քվեարկությանը:</li> </ul>

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Սպարտակ Թևոսյան	Տնօրենների խորհրդի անդամ	<ul style="list-style-type: none"> <li>✓ մասնակցել խորհրդի նիստերին,</li> <li>✓ մասնակցել խորհրդի որոշումների քվեարկությանը:</li> </ul>
Կառլեն Պետրոսյան	Տնօրենների խորհրդի անդամ	<ul style="list-style-type: none"> <li>✓ մասնակցել խորհրդի նիստերին,</li> <li>✓ մասնակցել խորհրդի որոշումների քվեարկությանը:</li> </ul>
Սլավա Գաբրիելյան	Արտադրության և ղեկավարման գծով տնօրեն	<ul style="list-style-type: none"> <li>✓ կատարում է Ընկերության էլեկտրահիդրոկայանների էլեկտրաէներգիայի արտադրության պլանավորում և աշխատանքի ռեժիմների մշակում</li> </ul>
Ժան Հովհաննիսյան	Ֆինանսների և էկոնոմիկայի գծով տնօրեն	<ul style="list-style-type: none"> <li>✓ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության կառավարում</li> </ul>
Արայիկ Դավթյան	Գլխավոր հաշվապահ	<ul style="list-style-type: none"> <li>✓ իրականացնում է հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական հաշվետվությունների ժամանակին կազմումն ու ներկայացումը,</li> <li>✓ աջակցում է Ընկերության սեփականության պահպանման, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների խնայողաբար օգտագործման նկատմամբ վերահսկողությանը,</li> <li>✓ կազմակերպում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը,</li> <li>✓ գլխավորում է նախահաշիվների կազմման սկզբնական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևերի նախապատրաստման աշխատանքները:</li> </ul>